ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

28 հունիսի 2017 թվականի N 83-Ա

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԸՆԴԵՐՔԻ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 40-րդ, 41-րդ հոդվածներով, 42-րդ հոդվածի 1-ին մասի պահանջով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության 2017 թվականի հունիսի 13-ի թիվ ԲՓ 56 «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության» պետական փորձաքննական եզրակացությունը, «ՄԵՏԱԼՍ ՄԱՅՆԻՆԳ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության 2017 թվականի հունիսի 13-ի թիվ 57 գրությունը, Ընդերքի գործակալության պետի զեկուցագիրը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «ՄԵՏԱԼՍ ՄԱՅՆԻՆԳ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությանը (այսուհետ՝ ընկերություն)՝ երեք տարի ժամկետով տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության թիվ ԵՀԹ-29/246 թույլտվությունը Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Շամբի բազմամետաղների հանքերևակման տեղամասի հետևյալ կոորդինատներով՝ 1.X=4373139 Y=8596643, 2.X=4369974 Y=8597266, 3.X=4369978 Y=8594101, 4.X=4371914 Y=8594449, 5.X=4372575 Y=8593927, 6.X=4373169 Y=8593916 (տրված են WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) սահմանափակված 877 հա տարածքում՝ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ կատարելու համար:

2. Ընդերքի գործակալության պետին՝

1) պատրաստել սույն հրամանի 1-ին կետում նշված Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Շամբի բազմամետաղների հանքերևակման տեղամասում օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության ընդերքօգտագործման պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր), օգտակար հանածոների արդյունահանման նպատակով

ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունք հայցելու դիմումը բավարարելու վերաբերյալ ծանուցել դիմումատուին և հրավիրել վերջինիս՝ 10-օրյա ժամկետում պայմանագիրն իր կողմից վավերացնելու (ստորագրելու և կնքելու) համար,

2) ընկերության կողմից պայմանագիրը վավերացնելուց (ստորագրելուց և կնքելուց) հետո 10-օրյա ժամկետում վերջինիս տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունքը հավաստող փաստաթղթերի փաթեթը (օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության թույլտվություն, երկրաբանական ուսումնասիրության պայմանագիր, լիազոր մարմնի հետ համաձայնեցված աշխատանքային ծրագիր),

3) ծանուցել ընկերությանը, որ սահմանված ժամկետներում պայմանագիրը չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փաթեթը չստանալու դեպքում, օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունք հայցելու դիմումը բավարարելու վերաբերյալ սույն հրամանը կճանաչվի ուժը կորցրած,

4) սահմանված կարգով իրականացնել երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների պետական հաշվառումը՝ երկրաբանական ուսումնասիրությունների իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

3. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին՝ Ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթը ստանալուց հետո, եռօրյա ժամկետում կատարել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումները:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ